ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 19, հեռ.(041) 12-09-98, nikolpashinyan@gmail.com

N-98-054
«01» դեկտեմբերի, 2017թ.

«Հետք» պարբերականի լրագրող
Սեդա Ղուկասյանին.

Հարգելի տիկին Ղուկասյան.

Ձեր 11.25.2017թ. հարցմանն ի պատասխան հայտնում եմ, որ ԱԺ վեցերորդ գումարման առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում ԱԺ-ում ընդունել եմ թվով 60 քաղաքացիների, որից 9-ի խնդիրը լուծվել է, մեկը լուծվել է մասնակի, 10 հարցով ընդհանրապես հրաժարվել եմ զբաղվել՝ առաջ քաշված խնդիրների ակնհայտ անհիմն լինելու պատճառով, մյուս հարցերը ընթացքի մեջ են:

Մեծ հաշվով քաղաքացիների առաջ քաշած հարցերի ճնշող մեծամասնությունը չեն մտնում ԱԺ պատգամավորի ուղիղ լիազորությունների շրջանակի մեջ: Բայց փորձում եմ օգտագործել պատգամավորի կարգավիճակը ըստ հնարավորության մարդկանց աջակցություն ցույց տալու համար:

Քաղաքացիների հիմնական մասի հարցերը կապված են բնակարանով ապահովելու, աշխատանքի տեղավորման հարցերի, սոցիալական ծանր վիճակի, դատական և վարչական անարդարությունների հաղթահարման հետ: Շատ դեպքերում քաղաքացիներին ուղղակի տրվում է խորհրդատվություն, թե ինչ քայլեր են հարկավոր կատարել առաջ քաշված հարցի լուծմանը հասնելու համար: Նման հարցերը ներառել եմ «ընթացքի մեջ է» բաժնում:

Այցելել եմ նաև «Առինջ մոլ» առևտրի կենտրոն, Գյումրի, Կապան, Գեղարքունիք, Ախուրյան՝ որտեղ հանդիպումներ եմ ունեցել մի խումբ քաղաքացիների հետ, ինչպես նաև հինգ անգամ այցելել եմ տարբեր ՔԿՀ-ներ՝ կալանավորված կամ ազատազրկման դատապարտված անձանց ընդունելու նպատակով:

Ստացել եմ նաև թվով 36 դիմումներ քաղաքացիներից, որոնց գերակշռող մասը նույնպես կապված են սոցիալական, առողջապահական և դատական վեճերին առնչվող խնդիրների հետ: Գրավոր դիմումներից 9-ում առաջ քաշված խնդիրը լուծվել է, 12-ը լուծվել է մասնակի, իսկ 15-ը չեն վերաբերում պատգամավորների լիազորություններին:

Տեղեկացնեմ, որ իմ ֆեյսբուքյան պաշտոնական էջի միջոցով ստացել եմ և ստանում եմ տասնյակ նամակներ, որոնց պատասխանում եմ: Այս նամակների վերաբերյալ, ցավոք, հաշվառում չեմ վարում:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

(98)